

ՅԵ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԽՈԶԵՐԻ ԳԱՆՏԱԽԸ

19780

ՏԱՐԱԴՐՈՒՅԹ

1934

ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԵ. ՀԱԿՈՎԱՆ

619.4 : 616.923



ԽՈԶԵՐԻ ԺԱՆՏԱԿԸ

~~16184~~

A ~~41/43~~



ԳՅՈՒՂՂԻՐՄԱՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

Պատ. իսմբաղիք՝ Խ. Ռեանյան

Մասն. իսմբաղիք՝ Արմենյան

Սըբագրիչ՝ Խ. Այվազյան և Մ. Փաթույան

Հանձնվել և արտադրության 1934 թ. գիւտրվ. 23-ին.

Սառացրվել և ապագրելու 1934 թ. մարտի 7-ին.

Դլավլիս № 163 Տիրաժ 3000 Պատճեր № 105

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կուսակցության 17-րդ համագումարն ամենայն որությամբ զբեց սոցիալիստական անասնապահության դարպացման խնդիրը ընկ. Ստալինն իր հաշվեառ դեկուցման մեջ կանգ առնելով զյուղատնտեսական այդ կարեսը բնագավառի վրա, նշեց, վար զյուղատնտեսության վերակազմակերպման շրջանում կուլակային աղիսացիայի ճետեանքով՝ մեր անասնապահությունն ոկրեց անկում տպրել և մեծ չափով նվազեց թե խոշոր ու մասն յեղջյուրավոր անասունների, թե ձիերի և թե խողերի թիվը Անասունների թվի այդ անկումը տեսց մինչև 1933 թիվը, յերբ նվազման չափերը, հասան միշտ մուժի, իսկ «խողաբուծության ասպարիզում արդեն ոկազիլ»։ Հակոբոսկ ողբոցիսը և 1933 թվականին արդեն ձայր են տաել աւզդակի վերելքի նշանները։

Այս նշանակում ե, վոր 1934 թվականը պահանջառ ե գառնա և կտրող և գառնա թէ բեկման տարբեկության վորդ ջանա անտանաբուծութեան անտեսության վերելքի առաջակետից» (ՍՍԱԼԻՆ)։

Սակայն առաջնորդի զբան այդ խնդիրն ինքնառ կարգով չի լուծվել 1934 թվականն անասնաբուծության բնագավառում իրոք բեկման տարի կզտոնա միայն այն գեղքում, յեթե, ինչողես ընկ. Ստալինն ե տում, «այդ զորմն իրենց ձեռքը վերցնեն մեր տմողի կուսակցությունը, մեր ըոլոր կուսակցական ու

անկուսակցացան աշխատողները, աչքի առաջ ունենալով, վոր անասնաբուծության պրոբլեմն այժմ հանդիսանում է նույնպիսի առաջնակարգ պրոբլեմ, ինչպիսին եր յերեկ արդեն հաջողությամբ լուծված հացանատիկային պրոբլեմը, իսկ այդ նշանակում է, վոր այժմյանից իսկ մեր բոլոր կուսակցական ու խորհրդային կաղմակերպությունները—մինչև Նրանց ստորին ողակները, մեր բոլոր կոլտնտեսական ֆերմաներն ու աշխատավոր մասսաները գործնական ու ակտիվ պայքար պիտի սկսեն անասնաբուծության պրոբլեմի արարությունները համար, ու հաջողման համար:

Անասնաբուծության դարդացման հաջողություններն ապահովելու համար, ամենից առաջ պիտի ամբակնդել մեր կոլտնտեսական ու խորհանտեսական ընասնապահական ֆերմաները, պիտի ստեղծեն կերի ամուր բազա, ուսցիոնալ և կանոնավոր հիմքերի վրա դնել գոմաշինաբարությունը, անասունների խնամքը, ապահովել հոտերի և նստիրների վերաբարակրությունն ու մատղաշների աճը և այլն և այլն:

Մակայն այս միջոցառութների շաբառում կարելութաղույն տեղ ե բռնում նաև զոռակելնիկայան ու անասնաբուծական գիտելիքների տարածումը հենց անասնաբուծության գծով գրաղված կոլտնտեսական—աշխատավորական լայն մասսաների մեջ:

Եթե հացահատիկային պրոբլեմի լուծման ընթացքում մենք խնդիր դրինք—լայնորեն մասսայականացնել ազբուգիտելիքները և դա մեծ չափով նպաստեց այդ պրոբլեմի լուծմանը, ապա այսոր, նույնպիսի սրությամբ խնդիր և դրվում մեր առաջ լայն մասսաների սեփականություն դարձնել զոռովետպիտելիք:

ներն աշխազես, վոր յաւրաքանչյուր անասնապահ-կոլ-
տնառեական պարզ զագոփար ունենա անառունների
խնամքի ուղղիունու ձեերի մասին և կարողանու կան-
խել նրանց հիմանդրությունները, կամ հիմանդրության
գեոլգութ կարողանու առաջին ողնությունը ցույց տալ
անսուռնին:


Սա չափազանց լուրջ և կարեոր խնդիր է, և ա-
ռանց այս խնդրի դրական լուծման, մենք մեծ դժվա-
րությունների առաջ կկանգնենք մեր սոցիալիստական
անասնաբուժյունն իր ներկա ծանր դրությունից
հանելու բնիքացքում:

Այդ տեսակիսից մեծ արժեք և ներկայացնում
ընկ. Յե. Հակոբյանի ներկա գրքույշկը, վոր խոսում և
խոզիքի մանուսիս հիմանդրության և նրա դեմ պայ-
քարելու միջոցների մասին:

Ամեն մի խորհանուեական ու կոլտնտեսական ա-
նասնապահական ֆերմայում, և վոչ միայն ֆերմայում,
այլ և նրա ամեն մի ողակում, ամեն մի գոմում պիտի
մանրամասն ուսումնասիրել ժանտախտի առաջացման
ու տարածման պատճառները և նրա դեմ պայքարելու
միջոցները, յուրաքանչյուր անասնապահի զինել այդ
անհրաժեշտ զիտելիքներով, վորպեսզի նա պատրաստ
լինի պայքարելու մեր անասնապահությանը յերրեմն
ծանր հարված հացնող այդ հիմանդրության զեմ:

Յեկ հենց այդ կլինի ընկ. Մատինի կողմից մեր
առաջ դրված խնդրի լուծման կարեոր պայմաններից
մեկը:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ի՞նչ և ԳՈՐԾԵՐԻ ԺԱՆՏԱԿԻՑԻ

Խողերի վարակիչ հիվանդությունները շատ են՝ մանտախտ, կարսիր քամի, ծաղիկ, սիրիբախտ, արյունանեխտ, թյուն (սեպտիցեմիա), պարատիֆ և այլն, բայց մեր սրայմաններում ներկայումս խոշոր վատանդ և հանգիսանում այսպես էռջված խողերի ժանտախտը:

Խողերի ժանտախտը սուր-վարակիչ հիվանդություն և, նաև շատ հեշտ է բարպարակ մի խողից անցնում և մյուսին, մեկ անտեսությունից անզափոխվում և մյուսը, բնոգունելով համաճարակային բնույթը. Այդ աեսակեաից ժանտախտը համարվում և խողարուծական արնահոսությունների համար իրքն դիխավոր չարիք և նրանց սրանառում և խոշոր անտեսական կորուստները Մահցության դեպքերը ժանտախտից հասնում են մինչ 90° , դիխավորապես այն անտեսություններում, վորոնց հայտնի չե այդ վարակի դեմ սրայքարելու ձեերը Բայց անկումն ընդհանուր տոմամբ ինում և $30-40^{\circ}$ ժանտախտով վարակվում են բօլոր հասակի և ցեղի խողերը, առանց բացառության տարիք բոլոր ցեղանակների բնիտացքում: Հիվանդությունից առողջացած խողերը ցերկար ժամանակ չեն կաղդուրվում և հաճախ զրկվում են բեղմնավորման բնոգունակությունից: Մյուս աեսակի կենդանիները, ինչպես նաև մարդիկ, խողերի ժանտախտով չեն վարակվում:

ԺԱՆՑԱԽԻ ԱՐԱՋԱՑՄԱՆ ՅԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

Խոզերի ժանտախտ հիվանդությունն առաջ և գալիս չափազանց փոքր, մինչև անգամ մանրադիտակի տուկ աննշմարելի եյակից, նա անցնում է կավից պատրաստված մանրեաբանական քամիչներից (Փելտը), վերին աստիճանի փոքր՝ մինչև 0,5 մմ (միկրո-միկրոն) տրամագիծ ունեցող ծակոտիներից և այդ պատճառով ել կոչվում է ֆիլտրից անցնող վիրուս (Վիրուսը՝ հիվանդություն առաջ բերող պատճառն ե).

Ժանտախտի վիրուսն արտաքին ազդեցությունների նկատմամբ բարձականին դիմացկուն ե: Սառցարանում վիրուսով վարակված արյունը կամ մի կաթի չորացած արյունը, իր վարակունակությունը պահպանում և մինչև մեկ տարի Սառցարած մսի մնջ, նա իր վարակիչ հատկությունները պահում և մի քանի շաբաթ։ Արեկի ճառագայթները շատ դանդաղ կերպով են թուլացնում վիրուսի վարակիչ հատկությունները։

Ժանտախտի վիրուսը վոչնչանում և մի ժամկաընթացքում $60-70^{\circ}$ աաքության ազդեցությունից, $10-20^{\circ}/_0$ շհանդցրած կամ նոր հանդցրած կը լուծույթի ներդրմությունից և ուրիշ ախտահանիչ նյութերի աղդեցությունից։

Բնական պայմաններում խողերի վարակումը կատարված է զլիավորապես վարակված կեր ուտենու կամ ջուր խմելու միջոցով։ Ներս մտած վիրուսն արյան հոսանքի միջոցով տարածվում և մարմնի բոլոր մասերը, կուտակվենով ակնթաղանթի դեղձի, լեղու, աղիքացին պարունակության և մեզի մնջ։

Այսպիսով հիվանդ խողն իր արտաթորանքի՝ մեղի,

որպատճերի, աղբի և թերներ լորձունքի միջոցավ առաջածում և վարակին իր ըրջապատը, հանդիսանալով վարակի առաջատար աղբյուր՝ մասցած առողջ խողերի համար Բացի մերժիչյալ հանդաժներից, հիվանդության զարգացման և լոյն ծափալման դորձում խոշոր դեր են խողում նույն համեյալ մամնաները: Նոր դնած կատձեր բերած խողերը կարսդ են գաղտնի կերպով կրել հիվանդությունը, բայց չունենալ հիվանդության արտաքին նշանները և այլոք աննկատելի կերպով տարածել մարտկու: Այնունհան խողերի տեղափոխությունները, յերկաթուղիներով և սովորական ճանապարհներով, բնդհանուր արտավայրերը, վարուել շիման մեջ են մանում զանազան անտեսությունների խողերը և մերջապես խողերի ցուցանադիսները և շուկաները: Այդ բոլոր հանդաժներն անկատկած նպաստում են ժամանակագույն տարածման:

ԺԱՆՏԱՎՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՅԼԵՆԵՐԻ.

Վարակված խողերն ախորժակից զբկվում են, կերչին ուսում, բայց մեծ քանակությամբ ջուր են խմում: Տարությունը համար մոտենալից մինչև արտաքին նշանների արտահայտվելն անցնում է 4-ից 21 որ, մինչև բայց սովորաբար հիվանդության դադանի շրջանը տևում է 8—10 որ: Խողերն ամրագծ ժամանակ սիրում են պառկել, զնելով իրենց զլուխներն այս կամ այն առարկայի տակ: Մաշկի վրա, զիխավորապես անմաղ տեղերում (աղզրի, ականջների և փորի մաշկի վրա), առաջացող արյունահոսության հետ (կրօնալինից) միաժամանակ առաջ են դալիս կարմրագոյն կետեր և բծեր: Ակնաթաղան-

թը համարյա միշտ բորբոքված եւ լինում, կարող եւ տեղի ունենալ նաև արյունահոսություն՝ ընական անցքերից հիվանդ խողերը քայլելու ժամանակ ճռնում են, և ետեւ վոտները փաթաթվում են միմյանց և վայր են ընկնում: Հաճախակի հիվանդ խոզի պոչը կախ քցած եւ լինում և մեջքը փոս ընկած: Սատկում են հիվանդության 5—8-րդ որը և սատկելու նախորյակին նրանց տաքության աստիճանն իջնում և մինչև 37-ի Խոզերի նորմալ տաքությունը 40 աստիճանից բարձր չպետք ել լինի: Դործնականում վերոհիշյալ բոլոր նշանները յերբեք հնարավոր չեն նկատել միայն մեկ հիվանդ խոզի վրա. դա հանդիսանում է մի խումբ՝ արհեստական կերպով վարակված խոզերի և նրանց կողմից ցույց տրված նշանների հանրագումարը:

Այսպես եւ ընթանում խոզերի ժանտախտ հիվանդության մաքուր և սուր ձեզ, բայց դժբախարար խոզերի ժանախար մեծ ժամանք ընթանում եւ բարդացումներով կամ յերկրորդական վարակումներով: Յերկրորդական վարակումն ընդհանրապես բացառվում է հետեւյալ կերպ՝ առհասարաւել նորմալ որդանիզմի մեջ ապրում են անվաս մանրեներ, վորոնք վոչ մի հիվանդաբեր ազդեցություն չեն ունենում որդանիզմի վրա, քանի դեռ նա առողջ եւ ուժեղ:

Սակայն յերբ որդանիզմն այս կամ այն պատճառի շնորիվ (վարակիչ հիվանդություններ, ցուրտ, հոգնածություն, կերի հանկարծակի փոփոխում և այլն), կորցնում եր հավասարակշռությունը և թուլանում, այդ գեղաքում մինչ այդ անվաս մանրենեցը (սապոֆիտներ) հայտնաբերում են իրենց մաքսիմում հիվանդաբեր ազդեցությունը և որդանիզմում առաջ են բերում բարդություններ:

Նույնանման յերեսույթի և կատարվում նուև ժանառում հիվանդության բարդացումների ընթացքում, յերբ ժանառախափ զիրուող մտնում և խողի որդանիզմը և այնուհեղ իր համար զանելով բարենպաստ պայմանակար, շատ աքաղ կերպով անում, զարգանում և տարածվում և նրա մաքնին բոլոր մասերը, թուլացնում և ուժառագու և անում չնորդիվ իր արտադրած թույների Անա այդ ժամանակ և, վոր մինչ այդ անվնաս ապրով պարատիմի և արյունանեխության հիվանդությունների միկրոբները հայտնաբերում են իրենց հիվանդաբեր ազգեցությունները՝ մի կողմից ուժեղացնելով և բարդացնելով քայլայման պրոցեսը, իսկ մյուս կողմից քողարկում ու դժվարացնում են ախտորոշումը (դիագնոզ):

Ժանառախափ բարդացման գեպքում հիվանդության վերահիշյալ նշաններին ավելանում են մի չարք ուրիշ նշաններ, ինչպիսին են՝ հաճախակի իրար հաջորդող ուժեղ լուծք և կապք, զեղնավուն կամ կանաչադույն կղկղանք դարշելի հասով—դա աղիքների բորբոքման նշանն և, վորը հետեւանք և պարատիմ հիվանդությունների դորձունեյության իսկ յերբ տեղի ունի դժվար շնչառություն և հաղ, այդ արդեն հետեւանք և թոքերի բորբոքման, վորը հետեւանք և արյունանեխություն առաջ բերող միկրոբների:

Այդ յերկու տեսակի յերկրորդական վարակուժները, իրեն հիվանդության բարդացում, հաճախակի կերպով հարակցում են ժանառախափ հիվանդության:

ԴԻԱՀԱՏՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Ամենածիշտ նշանը ժանառախափ ընկած խողի զիանառաման ժամանակ, դա կարմրագույն կետերի և բը-

ծերի դասավորությունն և մի շարք որդանների լոր-
 ձաթաղանթի վրա մակերեսային կերպով, արնահոսու-
 թյան հետ միաժամանակ, ինչոքս որինակ՝ կոկորդի,
 գեղձերի, միզափամփուշտի, փայծաղի, յերիկամների,
 թոքերի, ստամոքսի վրա և այլն թեթե կարմիր թա-
 նաքը փչելու լինենք սպիտակ թղթի վրա, ապա
 կստացվի այնպիսի մի պատկեր, ինչպիսին նկատում
 ենք մաքուր ժանտախտից սատկած խոզի դիահատ-
 ման ժամանակի Սակայն, յերբ խողերի ժանտախտն
 ընթանում ե վոչ մաքուր ձեռվ, այլ բարդացումներով,
 այն դեպում ընկած խոզի դիահատումը մեղ տալիս
 և հետեւալ ողատկերը՝ աղիքների բորբոքում համա-
 կենարոն գծերով դասավորված կլոր և խոր վերքերով
 կամ թոքերի ուժեղ բորբոքում - արնահոսությամբ.
 թոքերը ջրի մեջ դցելու դեպքում խորասուզվում են՝
 նրանց մեջ ող չկինելու պատճառով, կամ թե չե այդ
 յերկու դեպքն ել կարող են միաժամանակ ներկա լինել:

ԱԽԾՈՐՈՇՈՒՄԸ (ԴԻԱԳՆՈՑ)

Են ևս չկան այնպիսի միջոցներ կամ մեթոդներ:
 վորոնք հնարավորություն տային մեղ ձիշտ կերպով
 վորոշել խոզերի ժանտախտը՝ գեռ խոզերի կենդանի
 ժամանակի Բայց այնուամենայնիվ ժանտախտի մաս-
 սայական և արագ տարածվելը, խոշոր տոկոսով տեղի
 ունեցող սատկման դեպքերը — զեռ այդ վարակին ան-
 ծանոթ տնտեսություններում, բոլոր հասակի, ցեղի
 և տարվա բոլոր յեղանակների ընթացքում տեղի ու-
 նեցող խոզերի վարակումը, խոզերի անկումը հիվան-
 դության 5—8-րդ որվա ընթացքում, մաշկի վրա կա-
 տարվող յուրահատուկ փոփոխությունները և վերջա-

պիս, պիտուատման առանձնահատուկ պատկենը, խոսում
են հոգու ժամանակաշրջան

Միակ և յեղակի միջոցը ժամանախս հիվանդու-
թյունը հանաչելու համար, զա բուրովին առողջ մի դո-
հու վարակումն է հիվանդ կամ սատկած խողի արյունով
(արյունը նախորոք պետք է քամել ֆիլարով, բար-
դություններից առանով լինելու համար): Սակայն
այդ փորձի բացասական կողմն այն է, որ նախ և ա-
ռաջ այդ փորձի կատարումը տեղում հնարավոր չէ,
դա կատարում են միայն լաբորատորիաներում, յերկ-
րորդ՝ վարակումից մինչև հիվանդության նշանների
հայտնվելն անցնում է 4—21 օր:

Պետք է ասել, վար ընդհանրապես համաճարակ-
ների վերացման դորձը, միայն զուտ՝ նեղ մասնագի-
տական դորձ չէ, ընդհակառակը, զա միաժամանակ խո-
շոր հասարակական ժամանական դորձ եւ Առանձնա-
պիս ժամանախս համաճարակի վերացման դորձը պա-
հանջում եւ ունենալ բավական քանակությամբ պատ-
րաստված մասնագետներ, ընդդրանակ, տաք, լուսավոր
և մաքուր շենքեր, հարկ յեղած քանակությամբ և լավ
վորակի կեր, առանձին արոտավայրեր, աչարուրջ հրս-
կողություն վարակն իր ժամանակին հայտնաբերելու
դորձում, շուտափույթ կերպով պայքարի միջոցների
ձեռք առնելում, խիստ կարգապահություն առողջ խողի-
րը հիվանդներից անչափ պահելու և վերջիններս
ամեն մի պատճական տեղ չմորթելու խնդրում և վեր-
ջապես, խողանացների սիսակնատիկ ախտահաճնումն ամ-
բողջ հիվանդության ընթացքում: Պարզ է, վոր վերո-
հիշյալ բոլոր խնդիրների կիրառումը մեկ կամ մի քա-
նի մասնագետների կողմից հնարավոր չեն:

Այս տեսակետից պայքարի յերաշխերի՝ խողերի

ժանտախտ հիմանդրությունը վերացնելու գործում,
կտխված ե—մի կողմից՝ պատրաստված անասնաբուժա-
կան կազրեր ունենալուց, իսկ մյուս կողմից՝ խոզա-
բուծական տնտեսությունների և սովորողային ու կոլ-
խօգային մտասաների՝ կազմակերպված գիտակցական
ու ակտիվ դիրքարերմունքից՝ ժանտախտի դեմ ուղղված
պայքարի նկատմամբ

ՊԱՅՔԱՐԻ ՆԱԽԱԳԴՈՒՆՑԱՑՄԱՆ ՄԻԶՈՅԱՌՈՒՄԸ

Յուրաքանչյուր խողարուծական սովխող-կոլխող
կոմ անհատ տնտեսություն՝ պետք է նախորոք մտա-
ծի ժանտախտ հիմանդրության վտանգի մասին և վոչ
թե ձեռքերը ծալուծ սպասի, մինչև նրա տուաջ դաշն
ու ծավալվելը, վորի վերացումը, անշուշտ, ավելի մեծ
դժվարությունների և ծախսերի հետ և կառված, քան
թե նրա նախազդուշացման միջոցառութեանը Այդ նը-
պատակով ամեն մի տնտեսություն՝ իր խոզերին ժան-
տախտից զերծ պահելու համար՝ ոլետք և նախորոք
մտածի հետևյալ պրոֆիլակտիկանիտարական պայ-
մաններն ստեղծելու մասին.—

1. Յուրաքանչյուր տնտեսություն պետք է ու-
նենա իր կերի բազան, վորողեսղի վարտկված վայրե-
րից բերվող կերի միջոցով նա չբերի նաև վարտկը:

Սրա հետ միաժամանակ անհրաժեշտ և ունենալ
առանձին արտավայրեր, վորպեսզի իր անանսության
խոզերը շփում չունենան հարեան տնտեսությունների
խոզերի հետ:

2. Նոր գնած կամ ձեռք բերած խոզերը պահել
մեկուսացած դրությամբ—կարանախինի մեջ, առնվազն
21-որ՝ նրանց առողջությունը պարզելու նպատակով

անհրաժեշտ և անհնալ նոխորոշ սպառաստված մեջ
կուտարան:

ա) Ամեն որ հետեւ կարանտինի մեջ դանդող
խողերի կեր ուսելուն և տաքության աստիճանին:

բ) Կարանտինի մեջ պանվող խողերին խնամուշ-
ները վոչ մի շիտում չպետք և անհնան տնտեսության
մեջ զանգվար այլ խողերի հետ:

3. Խողանոցները կառուցել ընդարձակ, լուսավոր
և արևոտ տեղերում անթափանց հասակուլ, վորն ան-
հրաժեշտ և ախտահանման համար:

4. Խողանոցները պահել մաքուր, աղբի համար
անհնալ առանձին տեղ պատրաստած աղբանորեր և
խողանոցները պարբերաբար յենթարկել ախտահան-
ման:

5. Խողերին ջուր տալ այնպիսի աղբյուրներից
կամ զետերից, վորոնց վարակից մաքուր լինելու մա-
սին վոչ մի կասկած չկա:

6. Խողանոցների մուտքը կողմնակի մարդկանց
համար արգելել և վերջապես խուսափել ընդհանուր
ճանապարհներից, խողերի շուկաներից և շուցահանդիս-
ներից:

ԺԱՆՏԱԽԾԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱԳՈՒՄՆԵՐԻ

Բորբոքին տարբեր են պայքարի միջոցներն այն
անուելություններում, վորակդ արդեն մուտք և դոր-
ձել մանախառ հիվանդությունը:

Նման դեպքում, յուրաքանչյուր խորհանակակա-
նի, կորանակականի և առհատարակ սպասարկող պերսո-
նայի միտքը պետք և դորձի յերկու արդությամբ:

1. Թույլ չառլ, վոր առաջացած վարակի տարած-

վի և ընդունի լայն ծավալ—ընդհանուր ոլարտաղիք կարանտինի միջոցառութների ոգնությամբ:

2. Հոդ տանել դեռևս առողջ խողերի նկատմամբ, պատվաստութների միջոցով բարձրացնել նրանց գիւմարությունը ժանտախտ հիվանդության դեմ:

Վարակված տնտեսությունում հիվանդության առաջն առնելու և ժանտախտ հիվանդությունը հայտնաբերելու դեպքում, հիվանդ խողերը պետք է առանձնացնել առողջներից և անմիջապես հայտնել անասնաբուժին:

Անասնաբուժը, ներկայանալով տնտեսություն՝ իր տրամադրության տակ յեղած միջոցների ոգնությամբ, վորոշում և հիվանդության ընույթը և ասողջ խողերին հիվանդներից անջատում են:

Այն խողերը, վորոնք ունենում են $40,5^{\circ}$ և ավելի տաքություն, համարվում են հիվանդ:

Առանձնացնելուց հետո, անասնաբուժը բոլոր խողանոցները պետք է յենթարկի ախտահանման և ակնհայտանուալի հիվանդ խողերը մորթել և տալիս: Հիվանդները վոչ մի դեպքում չի կարելի մորթել զոմի մեջ կամ մի վորեմքն պատահական տեղում: Ժանտախտով հիվանդ խողերը պետք է մորթել սպանդանոցում կամ հատուկ պատրաստված տեղում, ըստ վորում անհրաժեշտ և ամեն մի միջոց ձեռք տոնել արյունը վոչնչացնելու համար, միշտ աչքի առաջ ունենալով այն հանդամանքը, վոր մինչև անդամ մի կաթիլ չորացած արյան մեջ ժանտախտի վիրուսն իր հատկությունները ոլահպանում և մինչև մի տարի:

Կուտակված աղբը, ինչպես և մորթած անասունների անգետք մտսերն անհրաժեշտ է լցնել աղբահորենը,

իսկ աղբանորերի բացակայության դեպքում, ազրը և անպիտք մասերն այրել կամ թաղել վոչ պահաս քան 2 մետր խորությամբ:

Ազրից մաքրած խողանոցները և ընդհանաբապես այն բոլոր առարկաները, վորոնց հետ շփում և ունեցել հիմանդ խողը, ողթոք և յենթարկել ախտահանժան շամաձայն նորագույն գիտական ավյալների, ամենալավ ախտահանիչ աղղեցությունը ժանտախտի վիրուսի նկատմամբ առնեն $10 - 20\%$ նոր հանդցրած կրի կամ 2% ուժիչ նատրի լուծույթները և խողանոցները, հիմանդության հայտնաբերման որից մինչևվ նրա վերջանալը, սիստեմատիկաբար ախտահանվում էն:

Ժանտախտի հայտնաբերման որից մինչևվ նրա վիրուսի դացիան, անտեսությունը գտնայում է կարանտինի մեջ և դադարեցվում են ամեն տեսակի շփումները հարեւան խողաբուծական անտեսությունների հետ՝ վարկել չտարածելու նպատակով:

Այդ նույն ժամանակաբնիքում չի կարելի արտահանել հիմանդ խողերի միուր ժանտախտով հիմանդ խողի միուր կարելի յեւ ողտագործել անտեսության ներսում և այն եւ միայն լավ յեփելուց հետո:

Խողերի սատելիու կամ ասողջանալու վերջին դեպքը յերեք ամիս հետո, կատարում են խողանոցների յեղբափակիչ ախտահանում, վորից հետո անտեսության կարանտինը վերացվում է Այգորինակ միջոցառումները մանրամասն զրվում և Անտանաբուժական Կարչության հրաճանգում, վորին առանց պատճառաբանության յենթակա յի կիրառման:

Առողջ դեռևս չվարակված խողերի վարտեման առաջն առնելու նպատակով՝ կատարում են ոլասսիլ և



ակտիվ պատվաստումներ։ Այդ տիպի միջոցների ող-
նության պիմում են՝

ա) Յերբ ժանտախան այս կամ այն ճանապարհով
ներս և խուժել տնտեսությունը

բ) Յերբ տվյալ տնտեսությունը վազուց վարակ-
ված և ժանտախտով և նոր համաճարակային բռնկում-
ների վատանգ կատ

գ) Յերբ տնտեսությունն ազատ և ժանտախտից,
բայց հարսնան՝ վարակված տնտեսությունը վտանգ և
սպառնում վարակի տարածման գործում։

Թե պասսիվ և թե ակտիվ պատվաստումների նպա-
տակն է բարձրացնել խոզերի դիմադրությունը ժան-
տախտ հիվանդաթյան հանդեպ։

Պասսիվ պատվաստումներ կատարում են հակա-
ժանտախտային շիճուկի ներարկումով, խոզերի փորի
կամ ազդրի ներքին մակերեսի մաշկի տակ Հակաժան-
տախտային շիճուկը պատրաստում են հատուկ գոր-
ծարաններում, այսպիս կոչված բիոֆարբիկաներում։
Հակաժանտախտային շիճուկի սրսկման չափը վորո-
շում են բիոֆարբիկաներում, նկատի առնելով խոզի
քաշը։ Հակաժանտախտային շիճուկը գործադրվում և
նաև հիվանդ խոզերը բռնժելու նպատակով։

Պասսիվ մեթոդի բացասական կողմերը—առաջին՝
շիճուկավ սրսկված խոզերը վարակից պաշտպանվում
են միայն 2—3 շաբաթ, վորից հետո նրանք նորից
յենթակա յեն վարակման. յերկրորդ՝ վոր այդ ձեկ
պատվաստումները շատ թանգ են նոտում անտեսու-
թյան վրա, վորովհետեւ, մինչեւ ժանտախտի վերջնական
լիկիդացիան, ամեն 2—3 շաբաթը մի անգամ պետք
և նորից սրոկումներ կատարվեն։

Ակտիվ պատվաստումների եյտթյունը կայանում
է նըստում, զոր մենք դիտակցաբար հիվանդ խողի
որյունով կամ միրուսով վարակում ենք առողջ խողի-
բը—նպատակ ունենալով ժանտախտի դեմ ստողծել վա-
րակամերը հոտ, հետագա համաճարակային բռնկումնե-
րից աղատ մնալու Գամար Այդ նպատակով առողջ խո-
ղերին ներարկում են միաժամանակ և հակաժանտախ-
տային շինուկը, և պիրուտ

Վիրուսը, նույնպես, ինչպես հակաժանտախտային
շինուկը, պատրաստում են բիոֆարբիկաներում վի-
րուսի սրակման չափը, նույնպես, ինչպես հակաժան-
տախտային շինուկի, վորոշվում և պատրաստող բիո-
ֆարբիսի կողմից

Ակտիվ պատվաստումները կատարում են դիխավո-
րապես վաղուց վարակված տնտեսություններում,
վորտեղ ժանտախտը պարբերաբար բռնկվում և և տա-
լիս և շատ խոշոր վիաները

Ակտիվ պատվաստումների առաջելությունները,
պատսիվ սրակումների նկատմամբ, կայանում են նըս-
տում, զոր նախ և առողջ ակտիվ պատվաստումներն
անհամեմատ տեսն են նստում անահառության վրա և
յերկրորդ՝ այդ մեթոդով սրակված և առողջացած խողերը,
ձևոք բերելով ժանտախտի դեմ վարակամերը ունա-
կություն, այլև աժքողջ իրենց կյանքում ժանտախ-
տով չեն վարակվում Բայց, գժրախտաբար, այս մեթոդը
և ունի իր բացառական կողմնը

Ակտիվ մեթոդի ամենապլիսավոր թերաթյունն այն
է, զոր մենք դիտակցաբար, վարակված անտեսու-
թյունները փրկելու նպատակով, բոլորովին առաջ
անահառությունների համար ստեղծում ենք վարակի

զարդացման և տարածման աղբյուրը՝ Զնայած դրան,
վերջին տարիների ընթացքում, ԽՍՀՄ Հողժողկոմատի
ձեռնարկությամբ, Հետավոր Արևելքի մի շարք խողա-
բուծական սովորողներում անց ե կացված ակտիվ պատ-
վաստումներ, վորոնք պարբերաբար տեղի ունեցող
համաճարակային բոնկումները վերացնելու գործում
տվել են խոշոր դրական արդյունքներ:

* * *

Ինչպես տեսնում ենք, ներկայումս մենք ունենք
խողերի ժանտախտի դեմ պայքարելու և նրան վերաց-
նելու բոլոր միջոցներն ու հնարավորությունները:
Մի կողմից սրսկումների միջոցով, մյուս կողմից վա-
րակը վոչնչացնելու նպատակով կատարված ախտա-
հանումների միջոցով և վերջապես վարակի տարածման
սուսան առնելու համար կիրառվող կարանտինային
ձեռնարկումների միջոցով և այլն: Այդ բոլոր միջոցա-
ռումների ժամանակին և տեղին կիրառումով՝ հնարա-
վոր կլինի ընդմիշտ վերացնել այդ հիվանդությունը՝
իսկ դրա համար անհրաժեշտ ե, վոր մեր բոլոր կոլ-
տնտեսականներն ու մենատնտեսները գիտակցորեն կա-
տարեն մասնագետների բոլոր ցուցումները և մանավանդ
այն տնտեսություններում, վարտեղ գեռ այս հիվան-
դությունները մուտք չեն գործել, պետք ե կիրառեն
ամենախիստ նախազգուշական միջոցներ՝ ժանտախտի
մուտքը կանխելու համար:



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.

FL0038933

[0443]

ԳԻՒԸ ՅՈ ԿԱՊ.

A I
4173



Ե. Ակոնյան

Чума свиней

Сельхозгиз

1934

Эривань